ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

04.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/87

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.06.2018թ. թիվ 03/26-3/10924-18 գրությամբ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարության 14.06.2018թ. թիվ 10/14/57647-18 գրության հիման վրա, 15.06.2018թ. թիվ 03/26-3/10924-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Ակադա Պրինտ» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 25.06.2018թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպվել է «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3 կետի «ա» ենթակետի՝ 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 3-րդ կետի «ե» ենթակետի համաձայն՝ որոշվել է ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հրավերով սահմանված ժամկետում և կարգով հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2018թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

Իսկ նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝

Ընտրված մասնակցին, անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ (պայմանագրի շնորհումը ARMEPS համակարգի միջոցով տրվել է 2018թ. մայիսի 24-ին):

«Ակադա Պրինտ» ՍՊԸ-ի ստորագրման ներկայացրած պայմանագրի նախագծի 7.1-րդ կետի համաձայն՝ «Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը»:

Միևնույն ժամանակ ներկայացված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց՝ հավելված 1-ում, աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանված պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո քսան օրացուցային օրվա ընթացքում:

Հաշվի առնելով նշված որոշակի հակասություն ունեցող դրույթները՝ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն 08.06.2018թ. «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ պայմանագրի նախագծի 7.1 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը, սակայն ներկայացված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց՝ հավելված 1-ում, աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանված պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո քսան օրացուցային օրվա ընթացքում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առանց պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու մեր կազմակերպությունը չի կարող ստանձնել պարտականություններ, առաջարկում ենք պայմանագրի նախագծի հավելված 1-ի կատարման ժամկետը դաշտը ձևակերպել հետևյալ կերպ՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում»:

Անտեսելով Ընկերության կողմից 08.06.2018թ. ներկայացված գրությունը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը 14.06.2018թ. թիվ 10/14/57647-18 գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ նշելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ նախարարության կողմից 2018 թվականի մայիսի 11-ին գնանշման հարցման ընթացակարգով կազմակերպված «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրական աշխատանքների գնման գործընթացի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված մասնակից է հայտարարվել «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն, որին, անգործության ժամկետը լրանալուց հետո, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 2018 թվականի մայիսի 24-ին տրամադրվել է

պայմանագիր կնքելու մասին ծանուցումը ու պայմանագրի նախագիծը: Հաշվի առնելով, որ 11.06.2018թ լրացել է ստորագրված պայմանագիրը և համապատասխան պայմանագրի կատարման ապահովումը ներկայացնելու համար սահմանված ժամկետը (25.05.2018թ-08.06.2018թ. ներառյալ), սակայն վերջինիս կողմից նշված փաստաթղթերը չեն ներկայացվել, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն զրկվել է նշված պայմանագիրը ստորագրելու իրավունքից...»:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարության 14.06.2018թ. թիվ 10/14/57647-18 գրության հիման վրա, 15.06.2018թ. թիվ 03/26-3/10924-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Ընկերությունը հայտնել է, որ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն, օգտվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասով իրեն վերապահված իրավունքից՝ սահմանված ժամկետում, այսինքն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետի ընթացքում, մինչև այդ ժամկետը լրանալը, այն է 08.06.2018թ., դիմել է պատվիրատուին՝ առաջարկելով պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություն: Ընդ որում, առաջարկված փոփոխությունը չի վերաբերել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը, այլ ընդամենը նպատակ է հետապնդել հստակեցնել պայմանագրի ուժի մեջ մտնելու և պարտականությունների կատարման սկիզբը որոշելու հարցը: Նման հստակեցման անհրաժեշտությունն, ինչպես արդեն նշվել է, պայմանավորված է եղել պայմանագրի նախագծի 7.1-րդ կետի և տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց՝ հավելված 1-ում նշված ժամկետի միջև առկա որոշ հակասությամբ, որով պայմանավորված՝ «Ակադա-Պրինտ» ՍՊԸ-ն դիմել է Պատվիրատուին՝ առաջարկելով հստակեցում անել կնքվող պայմանագրում:

Սակայն Պատվիրատուն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետի ընթացքում չի պատասխանել «Ակադա-Պրինտ» ՍՊԸ-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն արված պայմանագրի վերաբերյալ առաջարկին: Ավելին, պատվիրատուն 11.06.2018թ. «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ին զրկել է նշված պայմանագիրը ստորագրելու իրավունքից, քանի որ լրացել է ստորագրված պայմանագիրը և համապատասխան պայմանագրի կատարման ապահովումը ներկայացնելու համար սահմանված ժամկետը (25.05.2018թ-08.06.2018թ ներառյալ), սակայն Ընկերության կողմից նշված փաստաթղթերը չեն ներկայացվել:

Մինչդեռ, եթե ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստացվեր արձագանք «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի համաձայն ներկայացված առաջարկության վերաբերյալ, ապա Ընկերությունը կներկայացներ ստորագրված պայմանագիրը և համապատասխան պայմանագրի կատարման ապահովումը: Տվյալ դեպքում «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն ընդամենը սպասել է Պատվիրատուի պատասխանին՝ ներկայացված առաջարկության վերաբերյալ, այլ ոչ թե հրաժարվել պայմանագիր կնքելուց կամ խախտել գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն:

Ընկերությունը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը գտնում է, որ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, ուստի Ընկերությունը խնդրել է վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ի լրումն 25.06.2018թ. գրության, Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 27.06.2018թ. գրությամբ պնդել է 25.06.2018թ. գրությամբ ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել, որ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն օգտվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասով իրեն վերապահված իրավունքից՝ սահմանված ժամկետում, այն է՝ 08.06.2018թ. դիմել է Պատվիրատուին՝ առաջարկելով պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություն: Ընդ որում, առաջարկված փոփոխությունը չի վերաբերել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը: Նման հստակեցման անհրաժեշտությունը պայմանավորված է եղել պայմանագրի նախագծի 7.1 կետի և տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց՝ հավելված 1-ում նշված ժամկետի միջև առկա որոշ հակասությամբ, որով պայմանավորված Ընկերությունը դիմել է Պատվիրատուին՝ առաջարկելով հստակեցում անել կնքվող պայմանագրում:

Սակայն Պատվիրատուն սահմանված ժամկետի ընթացքում չի պատասխանել «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ի կողմից արված պայմանագրի վերաբերյալ առաջարկին: Ավելին, Պատվիրատուն ոչ միայն անտեսել է Ընկերության կողմից 08.06.2018թ. ներկայացված գրությունը, այլ նաև իր 11.06.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությամբ անգամ չի մատնանշել այն փաստը, որ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում, այն է 08.06.2018թ. ներկայացվել է պայմանագրի վերաբերյալ առաջարկ:

Մինչդեռ, եթե սահմանված ժամկետում ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստացվեր արձագանք «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի համաձայն

ներկայացված առաջարկության վերաբերյալ, ապա Ընկերությունը կներկայացներ ստորագրված պայմանագիրը և համապատասխան պայմանագրի ապահովումը: Տվյալ դեպքում՝ Ընկերությունը ընդամենը սպասել է Պատվիրատուի պատասխանին՝ ներկայացված առաջարկության վերաբերյալ, այլ ոչ թե հրաժարվել է պայմանագիր կնքելուց կամ խախտել է գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն:

Արդյունքում ՀՀ արդարադատության նախարարությունը «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ին ոչ միայն զրկել է պայմանագիրը կնքելու հնարավորությունից, այլ նաև դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու մասին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/87 ընթացակարգի շրջանակներում 19.06.2018թ. ժամը 10:50-ին և 25.06.2018թ. ժամը 11:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ արդարադատության նախարարության փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.06.2018թ. թիվ 10/14/57647-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.05.2018թ. գնանշման հարցման ընթացակարգով կազմակերպված «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրական աշխատանքների գնման գործընթացի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված մասնակից է հայտարարվել «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն, որին, անգործության ժամկետը լրանալուց հետո, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 24.05.2018թ. տրամադրվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը ու պայմանագրի նախագիծը: Հաշվի առնելով, որ 11.06.2018թ. լրացել է ստորագրված պայմանագիրը և համապատասխան պայմանագրի կատարման ապահովումը ներկայացնելու համար սահմանված ժամկետը (25.05.2018թ.-08.06.2018թ.

ներառյալ), սակայն վերջինիս կողմից նշված փաստաթղթերը չեն ներկայացվել, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն զրկվել է նշված պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Պատվիրատուն միաժամանակ նշել է, որ 24.05.2018թ. «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ին պայմանագրի շնորհում է տրվել նաև ARMEPS համակարգով, սակայն Ընկերության կողմից առ այսօր պայմանագրի շնորհումը չի ընդունվել կամ մերժվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/87 ընթացակարգի շրջանակներում 19.06.2018թ. ժամը 10:50-ին և 25.06.2018թ. ժամը 11:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 19.06.2018թ. ժամը 10:50-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/87 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/87 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ արդարադատության նախարարության կողմից ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի կարիքների համար հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2018թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո Ընկերությանը ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3. Պատվիրատուն 24.05.2018թ. «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկել է «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի նախագիծը և խնդրել է Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով, ժամկետում և հասցեով

ներկայացնել պայմանագրի կատարման ապահովումը և պայմանագրի կնքված և ստորագրված 2 օրինակ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.06.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.4 կետով արձանագրվել է, որ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, քանի որ Ընկերությունը պայմանագիրը կնքելու ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.06.2018թ. թիվ 03/26-3/10924-18 գրությունը, ՀՀ արդարադատության նախարարության 14.06.2018թ. թիվ 10/14/57647-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ի համապատասխան գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ և 14-րդ ենթակետերի համաձայն՝

13) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

14) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի կարիքների համար հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2018թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո Ընկերությանը ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Պատվիրատուն 24.05.2018թ. «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկել է «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի նախագիծը և խնդրել է Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով, ժամկետում և հասցեով ներկայացնել պայմանագրի կատարման ապահովումը և պայմանագրի կնքված և ստորագրված 2 օրինակ:

Հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.5-րդ ենթակետով նախատեսվել է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

Նույն կետի 8.7 ենթակետի համաձայն՝ մինչև սույն հրավերի 1-ին մասի 8.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Ընկերությունը «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 08.06.2018թ. գրությամբ հայտնել է, որ պայմանագրի նածխագծի 7.1 կետի համաձայն՝ պայմանագրով նաատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը, սակայն ներկայացված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացույց՝ հավելված 1-ում, աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանված պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո քսան օրացուցային օրը: «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առանց պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու Ընկերությունը չի կարող ստանձնել պարտականություններ, ուստի առաջարկում է Պատվիրատուին պայմանագրի նախագծի հավելված 1-ի կատարման ժամկետը դաշտը ձևակերպել հետևյալ կերպ՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:

Ի պատասխան «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ի 08.06.2018թ. գրության՝ Պատվիրատուն 11.06.2018թ. թիվ 10/57353-18 գրությամբ հայտնել է, որ համաձայն «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնման պայմանագրի նախագծի 7.1 կետի երկրորդ պարբերության՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը, այսինքն՝ պայմանագրի նախագծի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի սկիզբը՝ «պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում» միանշանակ հաշվարկվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պայմանագիրը սահմանված կարգով հաշվառվելու օրվանից սկսած, ուստի Ընկերության առաջարկության անհրաժեշտությունը չկա, քանի որ պայմանագրի նախագծով արդեն իսկ կարգավորված էր Ընկերության բարձրացրած խնդիրը:

Պատվիրատուն միաժամանակ հայտնել է, որ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը, որի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից և հաշվի առնելով, որ լրացել է Ընկերության կողմից ստորագրված պայմանագիրը և համապատասխան պայմանագրի կատարման

ապահովումը ներկայացնելու համար սահմանված ժամկետը, ուստի «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.06.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.4 կետով արձանագրվել է, որ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումն, այն դեպքում, երբ պայմանագրի նախագիծն ու պայմանագիր կնքելու մասին ծանուցումը վերջինիս տրամադրվել է 24.05.2018թ, ուստի հաշվի առնելով այն հանգամանքը, որ լրացել է Ընկերության կողմից ստորագրված պայմանագիրը և համապատասխան կատարման ապահովումը ներկայացնելու համար Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետը՝ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում,</u>*** չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ***սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ:***

Այսպիսով պայմանագիրը ստորագրելու և պայմանագրի ապահովումը պատվիրատուին ներկայացնելու համար Օրենքը նախատեսել է 10 աշխատանքային օրյա ժամկետ: Միևնույն ժամանակ Օրենքը նախատեսել է նաև մինչև 10 աշխատանքային օրյա ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ պայմանագրի նախագծում փոփոխություններ կատարելու հնարավորությունը: ՀՀ արդարադատության

նախարարության կողմից «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնման պայմանագրի նախագիծն «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ին ուղարկվել է ***24.05.2018թ.:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Տվյալ դեպքում պայմանագիրը ստորագրելու և պայմանագրի ապահովում ներկայացնելու վերջնաժամկետը տասն աշխատանքային օրվա պայմաններում լրանում է ***08.06.2018թ. ներառյալ:***

«Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի համար նախատեսված ժամկետի վերջին աշխատանքային օրը՝ 08.06.2018թ. գրություն է մուտք արել ՀՀ արդարադատության նախարարություն, որը Պատվիրատուի «Mulberry» փաստաթղթաշրջանառության համակարգում որպես մուտք գրանցվել է ***08.06.2018թ. ժամը 17:41-ին:*** Նշված գրությամբ Ընկերությունն առաջարկել է Պատվիրատուին փոփոխել պայմանագրի նախագծի 7.1 կետը կապված պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների ծագման պահի հետ: Մասնավորապես պայմանագրի նախագծի 7.1 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը, իսկ պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանված պայմանագիրն ուժի մեջ մեջ մտնելուց հետո քսան օրացուցային օրը:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նկատի ունենալ, որ www.gnumner.am տեղեկագրում 04.05.2018թ. հրապարակված «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով հաստատված պայմանագրի նախագծի 7-րդ կետի 7.1 կետով նախատեսված է եղել, որ պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ

ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը: Նույն հրավերով հաստատված պայմանագրի նախագծի թիվ 1 հավելված տեխնիկական-բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել է, որ աշխատանքը կատարվում է պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում:

Այսպիսով՝ Ընկերության կողմից Պատվիրատուին ուղղված 08.06.2018թ. գրության մեջ նշված դրույթները ի սկզբանե ամրագրված են եղել դեռևս 04.05.2018թ. հրապարակված հրավերով, որին մասնակցելու նպատակով և հայտ է ներկայացրել Ընկերությունը, ընդ որում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը նախատեսում է հրավերի պարզաբանում ստանալու կարգը և ժամկետները:

Այսպես, պայմանագիրը ստորագրելու և պայմանագրի ապահովումը պատվիրատուին ներկայացնելու տասն աշխատանքային օրյա ժամկետ նախատեսելն ինքնանպատակ չէ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ մինչև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված տասն աշխատանքային օրյա ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ: Նշված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ նախաստեսված տասն աշխատանքային օրյա ժամկետն այն ողջամիտ ժամկետն է, որի ընթացքում կողմերը հնարավորություն ունեն պայմանագրի պայմաններին ծանոթանալու, իսկ անհրաժեշտության դեպքում նաև թույլատրելի փոփոխությունների շուրջ համաձայնության գալու համար: Այս տեսանկյունից անհիմն է Ընկերության այն պնդումը, որ եթե ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստացվեր արձագանք «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի համաձայն ներկայացված առաջարկության վերաբերյալ, ապա Ընկերությունը կներկայացներ ստորագրված պայմանագիրը և համապատասխան պայմանագրի կատարման ապահովումը: Այս տեսանկյունից արձանագրում եմ, որ Ընկերությունն ուներ բավարար ժամանակ պայմանագրի նախագծի վերաբերյալ Պատվիրատուին առաջարկություններ ներկայացնելու և դրանց վերաբերյալ պատասխաններ ստանալու համար: Մինչդեռ Ընկերությունը պայմանագրի նախագծի ստորագրման և պայմանագրի ապահովման ներկայացման վերջին աշխատանքային օրը՝ 08.06.2018թ. գրություն է ուղղել Պատվիրատուին, և միևնույն ժամանակ չի ներկայացրել

պայմանագրի ստորագրված տարբերակը: Ընդ որում՝ Ընկերության պնդումն այն մասին, որ Պատվիրատուն չի արձագանքել նշված գրությանն անհիմն է, քանի որ Ընկերության կողմից գրությունն մուտք է արվել շաբաթվա վերջին աշխատանքային օրը (ուրբաթ)՝ 08.06.2018թ. և աշխատանքային օրվա ավարտին: Հետևաբար Պատվիրատուն օբյեկտիվորեն հնարավարություն չի ունեցել նույն օրը պատասխանել Ընկերությանը: Դրա հետ մեկտեղ Պատվիրատուն հաջորդ աշխատանքային օրը՝ 11.06.2018թ. (երկուշաբթի օր), թիվ 10/57353-18 գրությամբ համապատասխանաբար պատասխանել է Ընկերությանը:

Ինչ վերաբերվում է Ընկերության այն պնդմանը, որ ընդամենը սպասել է Պատվիրատուի պատասխանին՝ ներկայացված առաջարկության վերաբերյալ, այլ ոչ թե հրաժարվել է պայմանագիր կնքելուց կամ խախտել է գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն, ապա այդ կապակցությամբ գտնում եմ, որ Ընկերությունն ունենալով բավարար ժամանակ չի կատարել պայմանագրի կնքմանն ուղղված որևէ գործողություն, հետևաբար և հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում, իսկ 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Այսպիսով՝ Օրենքը սահմանում է հստակ ժամկետ պայմանագիրը ստորագրելու և ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՀՀ արդարադատության նախարարության 14.06.2018թ. թիվ 10/14/57647-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, ինչպես նաև այն համադրելով գործում առկա ապացույցների հետ, գտնում եմ, որ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն հրաժարվել է «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագիրը կնքելուց և թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.06.2018թ. թիվ 03/26-3/10924-18 գրությամբ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01235027) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**